ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Օրերս Առողջապահության ազգային ինստիտուտի աշխատակիցները, կարևորելով կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման գործընթացում պատվաստումների դերն ու նշանակությունը, ԱԱԻ-ի Հանրապետական գիտաբժշկական գրադարանի բացօդյա տարածքում պատվաստվել են կորոնավիրուսային հիվանդության դեմ:

ՊԱՏՎԱՍՏՎԻՐ ԵՎ ՀԱՂԹԻՐ COVID-19

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԽՄԲԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ

ՀՀ առողջապահության նախարարության և Երևանի քաղաքապետարանի համագործակցությամբ ձևավորված պատվաստումային շարժական խմբերը շարունակում են աշխատանքները:

Հյուսիսային պողոտայում և «Դալմա Գարդեն Մոլի» կայանատեղիում տեղակայված պատվաստումային կետերում կորոնավիրուսային հիվանդության դեմ արդեն իսկ պատվաստվել են բազմաթիվ քաղաքացիներ:

Քաղաքացիների գիտակցության, պատասխանատվության և ռիսկերի ճիշտ գնահատման արդյունքում, COVID-19-ի դեմ պատվաստումների համար դիմելիությունը կրկնապատկվել է:

Շարժական պատվաստումային խմբերը համալրված են **AstraZeneca** և **Sputnik-V** պատվաստանյութերով:



Հիշեցնենք, որ **AstraZeneca**-ով պատվաստումները կարող են իրականացվել **18** և բարձր տարիքի անձանց շրջանում, ըստ դիմելիության, կամավորության սկզբունքով:

Իսկ **Sputnik-V**-ով պատվաստումները նախատեսված են ռիսկի խմբերի անձանց, մասնավորապես՝ **18**-ից **54** տարեկան բուժաշխատողների, քրոնիկական հիվանդների, սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչների և աշխատակիցների համար:



MODERNA-Ն՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ/ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՀԱՐԹԱԿ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅՈՒՄ

Նուբար Աֆեյանի հիմնադրած **Moderna** ընկերության կողմից արտադրված կորոնավիրուսի դեմ պատվաստանյութն աշխարհում լավագույնն է ճանաչվել **Պատվաստանյութերի համաշխարհային կոնգրես-2021-ի** մասնագետների կողմից:

Այս դեղամիջոցը շրջանցել է Սպուտնիկ V-ին, ինչպես նաև Pfizer/BioNTech և AstraZeneca պատվաստանյութերին: Թե ինչ սկզբունքով է տեղի ունեցել ընտրությունը՝ չի հստակեցվում:

«COVID-19-ի դեմ լավագույն պատվաստանյութը» ցուցակում ներառվել են նաև ամերիկյան Janssen-ը և Novavax-ը, կանադական Medicago-ն, հնդկական Bharat Biotech-ը և կենդանիների համար Zoetis-ը:

ՊԱՏՎԱՍՏՎԻՐ ԵՎ ՀԱՂԹԻՐ COVID-19

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՆ ԱՐԴԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է



Հիշեցնենք, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը 100 %-ով կանխարգելում են մահվան ելքերն ու հիվանդության ծանր ընթացքը:

COVID-19-ի համաճարակային իրավիճակի կայունացման նպատակով շարունակվում են պատվաստանյութերի նոր խմբաքանակների մատակարարումները:

Մայիսի 1-ի գիշերը Հայաստան է ներկրվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից ՀՀ-ին տրամադրված COVID-19-ի դեմ CoronaVac պատվաստանյութը՝ 100 հազար դեղաչափ՝ 50 հազար անձի համար:

Նշենք, որ COVID-19-ի դեմ պատվաստումները շարունակվում են հանրապետության ամբողջ տարածքում, Առողջության առաջնային պահպանման օղակում՝ անկախ կցագրման փաստից, շաբաթվա բոլոր օրերին, Հայաստանի և մեր երկրում ապրող օտարերկրյա քաղաքացիների համար:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ ԿՈՏՐԵԼ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՇՂԹԱՆ

Անահիտ Ավանեսյան
ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար

ԿԱՆԱՉ ԱՆՁՆԱԳԻՐ. ԵՐԿՈՒ ԴԵՂԱՉԱՓ

Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նոր միջոցառումների ներդրումը հնարավորություն է ընձեռել վերանայել սահմանափակումների շրջանակը, քանի որ շրջափակումներն, իհարկե, ինքնանպատակ չեն և ուղղված են կանխարգելելու վարակի տարածելիությունը:

Այս ամենը հաշվի առնելով, մենք ճկուն կերպով փորձում ենք ներդնել պատվաստումային գործընթացը, դրան զուգընթաց, նաև հետևել այլ երկրներում տեղի ունեցող արագ փոփոխություններին՝ թեթևացնելու համար կարանտինի մասին որոշման կետերը:

Սույն նախագծով, այն քաղաքացիները, ովքեր կունենան պատշաճ պատվաստման հավաստագիր՝ կանաչ անձնագիր, այսինքն՝ երկու դեղաչափ ստացած կլինեն, այսուհետ մեր երկիր գալու համար լրացուցիչ ՊՇՌ թեստ հանձնելու կարիք չեն ունենա: Այսինքն՝ ՊՇՌ թեստի բացասական արդյունքը և պատվաստման կանաչ անձնագիրը հավասարապես կգործեն՝ որպես սահմանի հատման պահանջ:

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

219270
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

1014891
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

204578
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

4234
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Մայիսի 9-ի դրությամբ

2353 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

178 ՆՈՐ ԴԵՊՔ

457 ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

9419 ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

9 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ **060 83 83 00** 24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**